

«Շայ միջնադարյան գրականության ժանրերը» ժողովածուն եզրափակվում է Հենրիկ Բախչինյանի «Ձևագիր նիշատակաբաններ» ուսումնասիրությամբ: Այս աշխատանքը նույնպես պիտի տարվեր արևակի բաժինը: Անդալյան գնահատելի են Հեղինակի շանքերը՝ ժանրը տարրերակելու, նրա տարատեսակները առանձնացնելու, ծագումնաբանության ու զարգացման հարցերը իմացությամբ բնեկու խմատով: Բայց պիտի խոստովանենք, որ հարցի բնությունը Բուսցիկ է ստացվել: Առանցքային նշանակություն ունեցող առանձին օրինաչափությունները դուրս են մնացել ուսումնասիրողի տեսազաշտից, այն դեպքում, երբ նա մեզանում այդ ժանրի առաջին ուսումնասիրողն է: Աշխատանքում շրջված է նաև կոմպոզիցիայի տրամաբանական զարգացումը: Սկզբում տալիս է կառուցվածքը, ապա անցնում ծագումնաբանությանն ու զարգացմանը: Բախչինյանը իրավացիորեն պնդում է, որ ժանրը միջնադարի հոգեոր մշակույթի ինքնատիպ երկվություններից է: Ինքնատիպ է ոչ միայն իր գործառույթով, այլև գեղարվեստական հատկա-

նիշներով: Այստեղ պետք էր, որ ավելացվեր գրիչ-հեղինակի կերպարը: Գրչի ձայնը ժամանակի ձայնն է: Նա ոչ միայն գրական հուշարձանի արտագրողն է, այլև յուրահատուկ մեկնիչը:

«Շայ միջնադարյան գրականության ժանրերը» կոլեկտիվ ժողովածուն արժարժում է հայ հին գրականության տեսությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, նշտում շատ հասկացություններ, շրջանառության մեջ դնում պրոբլեմների էությունից բխող բնագրական հսկայական նյութ, ամփոփում ու ամբողջացնում ժանրերի ուսումնասիրության նախապատմությունը: Գիտական ամեն մի նոր խնդրի լուծման անդրանիկ քայլը, ինչպես ասում են, գործի կեսն է և նույնիսկ ավելին: Իր լուրջ որոնումներով և հարցադրումներով մեր առջև ըստ ամենայնի գնահատելի մի աշխատանք է, որը շատ բան կարող է տալ գրականության մասնագետներին, ուսուցիչներին, բանասիրության բաժինների ուսանողներին:

Զ. Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ, Յաղագս Վեցարեայ արարչութեան, աշխատասիրության Կիմ Մուրալյանի. Սրևան, 1984, ԻԲ+378 էջ

Լույս է առել «Շայ հնագույն թարգմանական հուշարձաններ» մատենաշարի երկրորդ գիրքը՝ Բարսեղ Կեսարացու «Յաղագս Վեցարեայ արարչութեան» երկի բնական-համեմատական ընթացիկ կիմ Մուրալյանի աշխատասիրությամբ:

Լույս ապահովված, մարդկային հարաբերությունների իրական վիճակին անհաղորդ լմնալուծ ձգտմամբ, ինչպես նաև քրիստոնեության հաստատման ճանապարհին եղած խոլընդոտները հաղթահարելու գործնական նպատակամղմամբ (էջ Թ):

«Նրբեր մեծ կապագովակացիներին»՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու և Գրիգոր Նյուսացու ևրկերն իրենց գործնական նշանակությամբ վաղ բյուզանդական շրջանի գրականության մեջ կարևոր անդ են գրագեցրել և բնականորեն ևրկերն են հայ թարգմանիչների ուղարկության կենտրոնում: Բարսեղ Կեսարացու «Վեցարեան» Աստվածաշնչից հետո առաջին թարգմանություններից մեկն է, իրականացված, անշուշտ, Սահակ-Մեսրոպյան դպրոցի լավագույն թարգմանիչների կողմից, V դարի առաջին կեսին: Նյութի բազմակողմանի և ըստ ամենայնի ուսումնասիրությունը աշխատասիրողին հնարավորություն է տվել եզրակացնելու, որ հանրադիտարանային բնույթի այս երկի «հայերեն յարգմանություն» անհրաժեշտությունը միջնադարյան Հայաստանում առաջին հերթին պայմանավորված էր մատուցվող նյութի հարկավորությամբ, ասկիբի թարգմանությամբ, բնական երևույթներն ու շրջապատող իրականությունը ճանաչելու և՛ «Նազիան», № 2

Անցյալում «Վեցարեային» հայերեն բնագրի առաջին և միակ ամբողջական հրատարակությունն իրականացրել է նշանավոր հայագետ Արսեն Բագրատունին: Հրատարակիչը երկու էջանոց առաջարկում հաղորդում է, որ լավագույն ընդօրինակություն չգտնելու պատճառով բավարարվել է «ոչ հին և ոչ ընտիր գրություն» սխալաշատ մի ձեռագրով: Հրատարակչի կատարած սրբագրություններն ու ճշգրտումները, ըստ երևույթին քիչ բան են փոխել, քանի որ այս բնագրին անդրադարձած հետագա բոլոր բանասերները միաձայն արձանագրում են Բագրատունու հրատարակության ազարտվածությունը և ընդգծում նոր հրատարակության անհրաժեշտությունը: Բնագրի երկրորդ հրատարակությունը

1 Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի կենարու կապագովակացուց ճառք վասն Վեցարեայ արարչութեանն, Վենետիկ, 1830:
2 Նույն տեղում. Յաղագրան, էջ 2:

Հատվածական է՝ իրականացված 1910 թ. Խ. Թոռնյանի կողմից: Այս դեպքում վեներտիկյան հրատարակությունից ընտրված հատվածները համեմատվել են Վիեննայի ձեռագրերի և հունարեն քննարկի հետ, կատարվել որոշ սըրբագրություններ և ճշգրտումներ: Այսպիսով, Բարսեղ Կեսարացու թՅաղագս Վեցարեհայ աբարչուրեհանս երկի հայերեն քննարկի ընտիր օրինակները վրա արվելիք նոր հրատարակության անհրաժեշտությունը, որ արձանագրվել է շուրջ 150 տարի առաջ, առ այսօր մնում էր անկատար: Փրախոսվող աշխատանքը գալիս է լուծելու հայագիտության համար չափազանց կարևոր այգ խնդիրը:

Աշխատասիրողը ԵՃրկու խոսքումն ներկայացնում է ձեռագրական հավաքածուները, առաջին քննական քննարկի հետ կապված՝ դժվարությունները, խնդիրները և լուծված հարցերը: Առաջաբանը բանասիրական ամփոփ ուսումնասիրություն է՝ գրված բացառապես ձեռագրական աղբյուրների և քննական քննարկից մակարեբվող նյութի վրա: Ինչպես և սպասելի էր, նրանում առաջին հերթին բացահայտվում են այն պարագաները, որոնք պայմանավորում են «Վեցարեհայի» հին թարգմանություն լինելու խնդիրը: Այնուհետև քննվում են թարգմանության քննարկի, ինքնատիպության հետ կապված այլադան հարցեր: Հետադոտողն իրավացիորեն այն քննարչում է որպես «տեղայնացված», «հայացի» թարգմանություն՝ մատնացուցելով առ այդ եղած իրական պատճառները: Նույնքան ուշագրավ է համոզիչ է հուշարձանի քառագանձի քննությունը: Հետադոտողն առանձնացնում է հուշարձանում հանդիպող քառերի շարք խումբ. ա) նեղիմաստ կիրառություններ, բ) միայն «Վեցարեհայի» ավանդված քառեր, գ) նոր Հայկազյան և Առձեռն քառարաններից դուրս մնացած քառեր, դ) քառեր, որոնք հնարավորություն են տալիս սրբագրություններ մուծելու լավագույն քառարաններում: Առաջարկում պատշաճ տեղ է հատկացվում սկզբնավորման և հետագա շրջանի հայ մատենագրության վրա «Վեցարեհայի» թողած հետքերի (ճղիչ, Անանիա Երևակացի, Հովհաննես Իմաստասեր (Սարկավագ), Հովհաննես Երզնկացի, Վարդան Արևելցի) բացահայտման վրա: Նկատենք, որ այդ նյութերը, բացառությամբ Անանիա Երևակացու, անտիպ են և համարված հատվածները գտնված ու քաղված են բացառապես ձեռագրերից: Առաջարկի այս հատվածը կարելի է դիտել որպես աշխատասիրողի «Բարսեղ Կեսարացի» և նրա «Վեցարեհան» հայ մատենագրության մեջ» հաջողված բանասիրական մենագրության շարունակությունը:

Սույն հրատարակությամբ Բարսեղ Կեսարացու «Վեցարեհայի» քննարկը մեզ է ներկայանում

իրոք բուրրովին նոր որակով ու մակարդակով: Եվ դա պայմանավորված է ոչ միայն նախորդ հրատարակությունների իրոք սխալաշատ լինելու իրողությամբ, այլև գիտական այն սկզբունքներով ու մեթոդով, որոնց հետևել է աշխատասիրողը:

Ակադեմիկոս Գ. Ս. Լիխաչովն արձանագրում է, որ այսօրվա քննասեր-քննարկներին ներկայանում է այսպիսի պահանջ. նախ ամբողջովին ուսումնասիրել հուշարձանի գրական պատմությունը, ապա կատարել քննական հրատարակություն: Այնուհետև, մասնավորեցնելով այս խնդիրը, գիտնականը շեշտում է, որ քննարկատական հետադոտության համար քննարկի առնչվող այլ հուշարձանների օգտագործումը «ծայրահեղ աշխատատար է», բայց և միայն այդ կարող է տալ «հետաքրքիր և էական արդյունքներ, հատկապես այն ստեղծագործությունների համար, որոնց հնագույն քննարկը մեզ չեն հասնում: Կիմ Մուրադյանը ընտրել է քննարկատության այսօրվա պահանջներով թեև արդիվ ալս ուղին, որը և տվել է գոհացուցիչ արդյունք: Քննական համեմատական քննարկի կազմմանը նախորդել է Բարսեղ Կեսարացու կյանքի ու գործունեության ուսումնասիրումը, «Վեցարեհայի» ձայն մատենագրության մեջ այդ գրական հուշարձանի ունեցած բազմաթիվ և բազմաբնույթ ազդեցությունների բացահայտումն ու աղբյուրագիտական քննությունը: Սրբագրությունների արդյունքները հրատարակվել են հողվածներով և առանձին մենագրությամբ: Վստահ կարելի է ասել, որ Եղիկ Կողբացու, Անանիա Երևակացու, Եղիշի, Վարդան Արևելցու, Հովհաննես Երզնկացու և այլոց կրկնում «Վեցարեհայի» թողած հետքերի ուսումնասիրումը չափազանց օգտակար են եղել սույն հուշարձանի քննական քննարկը կազմողի համար:

«Վեցարեհայի» գիտությունը հայտնի 31 ձեռագրերից գրախոսվող գրքում օգտագործվել են Մաշտոցի անվան Մատենադարանի, Երուսաղեմի, Վիեննայի, Վենետիկի, Լենինգրադի հայկական ձեռագրերի հավաքածուներում պահվող գրքազրերից 26-ը: Բացի այդ, պրպտումներն ի հայտ են բերել այս քննարկի հատվածական քննարկներին, քառարան-մեկնությունների,

3 Д. С. Лихачев. Текстология. Л., 1983, с. 24, 261.

4 «Բանբեր Մատենադարանի», № 10, էջ 43—54, «Հանդես ամսօրյա», 1976, № 11—12, էջ 577—590:

5 Կ. Մ. Մուրադյան. Բարսեղ Կեսարացի և նրա «Վեցարեհան» հայ մատենագրության մեջ. Երևան, 1976:

աաաաաա-լուծմունքների շուրջ 17 ձևագիր, որոնց մատուցած նյութը նույնպես Հաշվի է առնվել բընագիրը կազմելու ժամանակ: Ոչ պակաս կարևոր դեր են խաղացել երկի Հունարեն ընագիրը և տարրերը լեզուներից կատարված վրացերեն զույգ թարգմանությունները:

Հայագիտության մեջ տարրեր ժամանակներում և տարրեր գիտնականների կատարած ճշգրտումներն ու սրբագրությունները հաճախ հաստատվել են նոր փաստերով, երբեմն էլ մերժվել: Բոլոր պարագաներում ընագրին նպաստ բերող յուրաքանչյուր կոաուծ-դիտողություն ընդունելիս կամ մերժելիս դրախոսվող ընագրի կազմողը տվել է համապատասխան բացատրություն:

Աշխատասիրողն իրավացիորեն չի հետևել ձեռագրական տարրերիցվածները անխտիր ներկայացնելու սկզբունքին: Դրանք ամբողջությամբ ձևագրի տակ ունենալուց հետո, որոշակի սկզբունքով ու խնամքով բնոնաթափվել են, բացառությամբ մեկ-երկու հնագույն ընդօրինակության: Այս, ինչպես նաև ընագրագիտության մեջ այսօր ընդունված պարզ և դյուրընկալի պայմանական նիշերի օգտագործումը այլընթացումների բաժինը դարձրել են առավել կուռ, հստակ և մեկին:

Գրախոսվող ընագիրն ունի շուրջ 500 զուտ բնագրագիտական բնույթի ծանոթագրություններ: Բազմաթիվ այլ սրբագրություններ, մասնավորապես բերականական, ռեական, ուղղագրական, կետադրական շտկումներ և ճշգրտումներ, հասկանալի պատճառով, այս բաժնում չեն արտացոլվել:

Մասնագիտական որոշակի կարևորություն ունեն հատուկ անունների և հատկապես բուսական-դանական անվանումների ու արհեստագործական տերմինների հայերեն-հունարեն առարկայական ցանկերը:

Հրատարակության առիթով կարելի է անել նաև մի շարք մասնավոր դիտողություններ: Ձեռագիր «Վեցարեաները մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո աշխատասիրողի համար, անշուշտ, դժվարություն չպետք է ներկայացնեն ձեռագրերի ծագումնաբանական ծառը մի պատկերով տալը: Առաջարկում է հայտնվում է, որ ձեռագրական այլընթացումները զտելիս բացառություն է արվել միայն A, B, C, W միավորների համար, սակայն երբեմն նույն վիճակում է հայտնվում նաև E ձեռագիրը: Մանոթագրությունները, որ խիստ անհրաժեշտ են ընագրի վրա կատարված աշխատանքը հասկանալու համար, հաճախ կարճառոտ հրդումներ են միայն և անհրաժեշտություն են ստեղծում դիմելու տարբեր հրատարակությունների: Անշուշտ, խիստ շահավետ կլինեն, եթե հնագույն այս թարգմանության ընագրի հայերեն-հունարեն առարկայական ցանկը ընդգրկեր ընդհանրապես բոլոր բնագրական տերմինները:

Այս մանր դիտողությունները, սակայն, չեն խանգարում ասելու, որ հայ թարգմանական գրականության առաջնեկներից և կարևորագույն հուշարձաններից մեկի՝ Բարսեղ Կեսարացու «Վեցարեանի» սույն բնական-համեմատական ընագիրն իրականացված է բանասիրության և ընագրագիտության նորագույն պահանջներին համապատասխան, մասնագիտական հմտությամբ և բարեխղճությամբ օգտագործվել են այն ամբողջ նյութը և միջոցները, որ կարելի էր ծառայեցնել այդ նպատակին: Այսուհետև եթե հուշարձանի, թե՛ հայ մատենագրության հետ դրա բազմաթիվ աղբյուրների հարցերով զբաղվող մասնագետները կարող են հենվել իրոք վստահելի հիմքի վրա:

Ա. Բ. ՍԱՐԳՍՅԱՆ